ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԹԱԹՈՒԼ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԵՐԳԻ - ՊԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹ ՊՈԱԿ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ РА
ГОС. АНСАМБЛЬ ПЕСНИ И ТАНЦА
АРМЕНИИ ИМЕНИ ТАТУЛА АЛТУНЯНА

MINISTRY OF CULTURE RA
ARMENIAN STATE ENSAMBLE OF
DANCE AND SONG AFTER T. ALTUNYAN

№ 32 ,,09,, սեպտեմբերի 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Թ.Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական համույթ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « **ԹԱՊՀ-14/2-ՇՀԾՁԲ-11/2**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Ա.Իսահակյան 1, 01 սենյակ հասցեով, մինչև 2014թ. սեպտեմբերի 12-ը, ժամը 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք.Երևան, Ա.Իսահակյան 1, 01 սենյակ հասցեում, մինչև 2014թ. սեպտեմբերի 12-ը, ժամը 12:00-ն:

Գնման առարկա է հանդիսանում <<Թ.Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական համույթ>> ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ Ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

<<Թ.Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական համույթ>> ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ Ավիասպասարկման ծառայությունների մատուցման (որոնք կազմված են՝ 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2 ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում “Շրջանակային համաձայնագրեր” բաժնի “Հրավերներում կատարված փոփոխություններ” ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Երևան 0001, Սայաթ -Նովա պող. 15, Ереван 0001 , пр. Саят-Нова 15, Sayat -Nova Ave 15, Yerevan 0001
Հեռ. / Тел: /Tel. - (+ 37491) 46-88-28, (+ 37410) 58-94-74
Էլ.փոստ /Эл. почта/ E-Mail tigranyanashot@inbox.am

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Թ.Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական համույթ>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@egprocurement.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

« Թ.Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական համույթ» ՊՈԱԿ-ի

Տնօրեն Ա.Տիգրանյան